ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/06

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Մեգիէլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Տ. Ջիլավյանի,
«Մեգիէլ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Փարիզյանի, ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով բաց մրցույթ, բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 08.02.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 03.02.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 04.02.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/1464-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 08.02.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է Բողոքներ քննող անձին:

08.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/06 համարի ծածկագիրը:

19.02.2021թ.-ին և 26.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 19.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.02.2021թ.-ին:

2. <u>«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Մեգիէլ» ՍՊԸ-ն 08.02.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1 «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից հայտարարվել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32 ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու՝ նաեւ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու՝ նաեւ Ընկերություն):

1.2 Ընթացակարգն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանով:

1.3 ՈՒսումնասիրելով Պատվիրատուի 2021թ թվականի գնման պլանը՝ արձանագրում ենք, որ նրանում բացակայում է ձեռք բերվող ապրանքների միավորի նախահաշվային գինը:

1.4 Գնահատող հանձնաժողովը 20 հունվարի 2021թ ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով որոշել է մասնակիցների ներկայացրած հայտերը որոշ չափաբաժիններով մերժել՝ նախահաշվային գները գերազանցելու հիմքով, իսկ որոշ չափաբաժիններով՝ ճանաչել հաղթող մասնակիցներ:

1.5 Ընթացակարգի 11.01.2021թ ժամը 14:00-ին կայացած նիստի արձանագրության հետ հրապարակվել է հավելված, որում առկա չէ միավորի նախահաշվային գին:

1.6 20.01.2021թ 14:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությունը հրապարակվել է 26.01.2021թ ժամը 18:25-ին: Արձանագրությանը կից հրապարակված հավելվածում առկա են եղել միավորի նախահաշվային գներ: Ըստ էության Պատվիրատուի մոտ նախահաշվային գները ձեւավորվել են բանակցություններից հետո եւ ներառված չեն գնման պլանում:

1.7 26.01.2021թ ժամը 18:26-ին հրապարակվել է որոշում Ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների եւ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետեւյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում եւ նրանց միջեւ մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ներկայացված նորմերի վերլուծությունից փաստում ենք, որ գնումների օրենսդրությունը հիմնվում է գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, ապահովելով գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացում:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների եւ պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը եւ կառավարումը:

Նույն հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի համաձայն՝ գնման գին՝ ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ձեռք բերելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշվարկված նախահաշվային գինը:

Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ մասերի համաձայն՝ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը հաստատվում է բյուջետային ծախսերի գերատեսչական եւ գործառնական դասակարգմամբ:

Գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչեւ ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որեւէ ձեւի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշման (հետայսու՝ նաեւ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետեւյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում եւ կառավարում:

Կարգի 5-րդ բաժնով կարգավորվում է գնման գործընթացի կազմակերպումը: Նույն բաժնի 21-րդ մասի 2-րդ կետի ա/ ենթակետի համաձայն, եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի՝ 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա, ապա ապրանքների կամ աշխատանքների կամ ծառայությունների, բացառությամբ շինարարական ծրագրերի, ներառյալ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության եւ տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում հայտով ներկայացվում է նաեւ ընթացակարգը կազմակերպելու կամ դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքի կամ աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրով (գործարքով) սահմանված մեկ միավոր գինը, եթե առկա է նման պայմանագիր (գործարք): Եթե նմանատիպ պայմանագիր առկա չէ, ապա դրա մասին հայտում կատարվում է նշում, իսկ գինը չի սահմանվում,

բ/ ենթակետի համաձայն՝ 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, եւ առկա են պլանավորված, սակայն տվյալ գնման համար օրենքով սահմանված կարգով չնախատեսված ֆինանսական միջոցներ, հայտով ներկայացվում է նաեւ նմանատիպ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման համար պլանավորված մեկ միավորի առավելագույն գինը:

Գնման պլանում եւ Ընթացակարգի հրավերով նշված չի եղել ա/ ենթակետով նախատեսված մեկ միավորի գինը, սակայն վստահաբար ձեռք բերվող ապրանքների մատակարարման նպատակով նախորդ տարում պայմանագրեր կնքված են եղել եւ Պատվիրատուն մեկ միավորի արժեքը կարող էր նշել:

Ընթացակարգի ընթացքում մասնակիցները իրազեկված չեն եղել նախահաշվային գնի մասին, սակայն Պատվիրատուն նախահաշվային գինը պետք է որ ձեւավորած լիներ եւ թիվ 2 արձանագրության հետ միաժամանակ հրապարակված հավելվածում առկա լիներ, որպեսզի 4-րդ արձանագրությամբ բանակցությունների հրավիրելու պահին արդեն իսկ մասնակցին պարզ լիներ, թե ինչի շուրջ է բանակցությունը տեղի ունենալու: Սակայն Պատվիրատուն մինչեւ իսկ բանակացությունների ընթացքում «գաղտնի» է պահում նախահաշվային գինը: Մասնակիցների հետ բանակցելուց հետո հայտարարում է, որ մասնակցի գնային առաջարկը գերազանցում է իր նախահաշվային գնից: Պատվիրատուի նախահաշվային գնի մասին մասնակիցներն իրազեկվում են բանակցությունների արդյունքում արձանագրության հրապարակելուց հետո՝ կից հրապարակված հավելվածով: Ուսումնասիրելով հավելվածով ներկայացված նախահաշվային գները հասկանալի չէ, թե ինչպես է Պատվիրատուն ձեւավորվել նախահաշվային գինը:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Կրագի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը եւ կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

18-րդ կետի հստակ կարգավորումից արձանագրում ենք, որ Պատվիրատուն գնման պլանում չի կարող ներառել գնման ընդհանուր գումարը, սաակայն գնման առարկայի միավորի նախահաշվային գինը ներառել պարտավոր է:

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության սույն թվականի գնման պլանում բացակայում է ձեռք բերվող ապրանքների եւ՛ միավորի նախահաշվային գինը, եւ՛

գնման ընդհանուր գումարը, ընդ որում՝ բոլոր ապրանքների եւ ոչ միայն վիճարկվող Ընթացակարգով ձեռք բերվող ապրանքների:

Այսպիսով, առկա փաստական հանգամանքները վերլուծելով վերոհիշյալ իրավական նորմերի համատեքստում՝ արձանագրում ենք, որ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32 ծածկագրով գնման ընթացակարգը սկսել եւ իրականացրել է իրավական հիմքի խախտմամբ:

Օրենսդրական նորմերի խախտմամբ իրականացվող գնման ընթացակարգը չի կարող ապահովել օրինական հետեւանք, այլապես կհանգեցնի «Գնումների մասին» ՀՀ օրենքով ամրագրված սկզբունքների եւ նպատակների խախտման:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընկերությունը 16.02.2021թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32 ծածկագրով գնման ընթացակարգի առնչությամբ ներկայացրած բողոքի դեմ Պատվիրատուի դիրքորոշման եւ կից ներկայացրած նյութերի վերաբերյալ եւ որպես բողոքի իրավական հիմքերի լրացում հայտնում ենք հետեւյալը.

Ընթացակարգի հրավերը հրապարակվել է 22.12.2020 թվականի ժամը 17:25-ին:

Պատվիրատուի 11.02.2021թ թիվ 08-91 գրությանը կից ներկայացրած փաթեթի ուսումնասիրությունից արձանագրում ենք, որ դրանք կազմվել են 22.12.2020 թվականին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշման (հետայսու՝ նաեւ Կարգ) 20-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝

1) պատասխանատու ստորաբաժանում, եւ

2) գնումները համակարգող

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց: ....:

21-րդ կետի համաձայն, եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում եւ հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ե. գնման առարկայի պահանջվող ծավալը եւ մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը, ….:

2) եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի՝

ա. 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա, ապա ապրանքների կամ աշխատանքների կամ ծառայությունների, բացառությամբ շինարարական ծրագրերի, ներառյալ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության եւ տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում հայտով ներկայացվում է նաեւ ընթացակարգը կազմակերպելու կամ դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքի կամ աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրով (գործարքով) սահմանված մեկ միավոր գինը, եթե

առկա է նման պայմանագիր (գործարք): Եթե նմանատիպ պայմանագիր առկա չէ, ապա դրա մասին հայտում կատարվում է նշում, իսկ գինը չի սահմանվում,

բ. 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, եւ առկա են պլանավորված, սակայն տվյալ գնման համար օրենքով սահմանված կարգով չնախատեսված ֆինանսական միջոցներ, հայտով ներկայացվում է նաեւ նմանատիպ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման համար պլանավորված մեկ միավորի առավելագույն գինը.

3) գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը՝ ըստ հանձնաժողովի կազմում այդ անձանց ընդգրկման առաջնահերթության՝ նշելով հանձնաժողովի նախագահի թեկնածությունը:

Կարգի 24-րդ կետի համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանումը գնման հայտը՝ հերթական համարակալումով, իր կողմից հաստատվելու օրը գրությամբ փոխանցում է գնումները համակարգողին:

25-րդ կետի համաձայն՝ գնումները համակարգողը գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնահատում է գնման հայտի կազմման համապատասխանությունը Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին:….:

26-րդ կետի համաձայն պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով սույն կարգի 25-րդ կետով նախատեսված գրավոր հանձնարարականը կամ գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնումների համակարգողը կազմում եւ գրավոր պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գնահատող հանձնաժողով ձեւավորելու մասին հրամանի նախագիծը, որը

պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում:….:

Այսպիսով, Պատվիրատուն ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32 ծածկագրով ընթացակարգի ապահովման բոլոր գործողությունները, մինչ հայտերի բացումը, իրականացրել է մեկ օրում՝ 22.12.2020 թվականին:

13.04.2017թ թիվ 390-Ն որոշմամբ հաստատվում է գնման պլանի ձեւը, դրա լրացման, հաստատման եւ հրապարակման կարգը: Նշված որոշման հավելված 2-ով հստակ սահմանված է գնումների պլանի կազման ձեւը: Պատվիրատուի ներկայացրած վերլուծությունը ինքն իրենով հակասության մեջ է:

Էլեկտրոնային գնումների համակարգի վերաբերյալ Պատվիրատուի մեկնաբանությունները վերաբերելի չէ: «Գնումների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի միասնական կանոններով գործընթացի կազմակերպում ասելիս չի նշանակում, որ Պատվիրատուն պետք է թղթային մրցույթը կարգավորի էլեկտրոնային մրցույթի կանոններով, եթե ՀՀ կառավարությունը որոշումներ է ընդունել թղթային եւ էլեկտրոնային համակարգով գնումների մրցույթ իրականացնելու համար, ուստի առկա է եղել դրա անհրաժեշտությունը, այլապես որպես կարգավորող իրավական ակտ ՀՀ կառավարությունը կընդուներ մեկ որոշում:»:

3. <u>«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 08.02.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/1625-2021 գրությամբ դիմել է «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 08.02.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն, ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 11.02.2021թ.-ին թիվ 08-91 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան <<Մեգիէլ>> ՍՊԸ-ի կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ 08.02.2021թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/06 ծածկագրով բողոքի, հայտնում ենք հետևյալը.

1. Գնումների պլանի մասով.

ա) <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն.

<<Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում. >>

բ) ՀՀ Կառավարության 13.04.2017թ. թիվ 390-Ն որոշման թիվ 2 հավելվածով հաստատված է այլ միջոցների հաշվին կատարվելիք գնումների պլանի ձևը և թիվ 3 հավելվածով (Այսուհետև՝ Հավելված)՝ պլանի լրացման կարգը: Հավելվածի 2-րդ բաժնի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված է հետևյալը.

<<4) 5-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների մեկ միավորի գինը.

5) 6-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության քանակը: Ընդ որում, եթե տվյալ տողի «Չափման միավորը» սյունակում նշված է «դրամ», ապա այդ տողի «Քանակը» սյունակում նշվում է «1» թիվը.

6) 7-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր գումարը՝ հազ. դրամով: Ընդ որում, եթե տվյալ տողի «Չափման միավորը» սյունակում նշված է «դրամ», ապա այդ տողի «Միավորի գինը» սյունակում նշված գումարը հավասար է 7-րդ սյունակում նշված գումարը բաժանած հազարի: Հակառակ դեպքում 7-րդ սյունակում նշվում է «Միավորի գինը» և «Քանակը» սյունակների արտադրյալը բաժանած հազարի:>>

գ) Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն.

<<Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է: >>

դ) ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետև՝ Կարգ) 18-րդ կետի համաձայն.

<<Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:>>

ե) <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն

<<Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:>>

զ) Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի համաձայն.

<< 2. Գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինը՝

11) իրականացնում է էլեկտրոնային գնումների համակարգի սպասարկման և համակարգման գործառույթները.>>

Իրավական ակտերի վերոնշյալ դրույթները մեկնաբանելուց հստակ պարզվում է հետևյալը.

-Հավելվածով տարանջատված չեն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով և փաստաթղթային ձևով գնումների դեպքերով պայմանավորված գնումների պլանի լրացման ձևերը, հետևաբար երկու դեպքում էլ գնումների պլանը լրացվում է նույն սկզբունքով,

-Հավելվածի պահանջների համաձայն պլանի 7-րդ սյունակը պետք է հավասար լինի 5-րդ սյունակի թիվ բազմապատկած 6-րդ սյունակի թիվ բաժանած 1000-ի,

-Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը ունի երկու կետ և 1-ին կետի համաձայն Պատվիրատուն ընդհանրապես չունի գնման առարկայի նախահաշվային գին (ոչ ընդհանուր և ոչ էլ բնականաբար միավորի) հետևաբար պլանում հնարավոր չէ լրացնել միավորի գինը,

-Կարգի 18-րդ կետը չի տարանջատում Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով պայմանավորված դեպքեր, հետևաբար դրույթը չի կարող մեկնաբանվել պլանում միավորի գնի պարտադիր լրացման կոնտեքստում,

- Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն Գնումների գործընթացը հիմնվում է միասնական կանոններով կազմակերպման սկզբունքի վրա,

Հատկանշական է նաև այն, որ էլեկտրոնային գնումների համակարգով գնում իրականացնելու դեպքում PPCM համակարգում գնումների պլանը լրացնելիս Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառման պայմանը ընտրելու դեպքում համակարգը ավտոմատ ապաակտիվացնում է և ընդհանուր գնի և միավորի գնի լրացման դաշտերը և հնարավորություն չի տալիս Պատվիրատուներին լրացնել միավորի գին:

Մասնակցի պնդումը Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառման դեպքում գնումների պլանում միավորի գինը պարտադիր լրացնելու մասով հակասում է ՀՀ գնումնրեի մասին օրենսդրությանը, և հակադարձում է ամբողջ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող գնումների իրավական հիմքին:

2. 11.01.2021թ կայացած հայտերի բացման նիստի արձանագրությամբ նախահաշվային գները չներկայացնելու և նախահաշվային գների ձևավորման մասով.

ա) Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն

<<21. Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝.....

.....>>

բ) Կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն

<<2) եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի՝15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, և առկա են պլանավորված, սակայն տվյալ գնման համար օրենքով սահմանված կարգով չնախատեսված ֆինանսական միջոցներ, հայտով ներկայացվում է նաև նմանատիպ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման համար պլանավորված մեկ միավորի առավելագույն գինը>>

գ) Կարգի 24-րդ կետի համաձայն.

<<24. Պատասխանատու ստորաբաժանումը գնման հայտը՝ հերթական համարակալումով, իր կողմից հաստատվելու օրը գրությամբ փոխանցում է գնումները համակարգողին:>>

դ) <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև Օրենք) 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

1) տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

7) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

8) գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

9) տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

10) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

11) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

ե) Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի ա) և բ) պարբերությունների համաձայն.

<<5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,>>

Իրավական ակտերի վերոնշյալ դրույթները մեկնաբանելուց հստակ պարզվում է հետևյալը.

- Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն գնում կատարելու դեպքում գնումների պատասխանատու ստորաբաժանումը գնման հայտով նախատեսվում է գնման առարկայի միավորի առավելագույն գին, ինչը նաև հիմք է ստեղծում ընդհանուր քանակի հաշվարկով ընդհանուր նախահաշվային գին ստանալուն:

- Օրենքի 33-րդ հոդվածի Ընտրված մասնակիցը որոշվում է հայտերի բացման նիստին, ընդ որում բանակցությունների պահանջով պայմանավորված նիստը կասեցվում է,

ուսպի և բանակցությունների անցկացման նիստը հանդիսանում է հայտերի բացման նիստի ուղղակի շարունակությունը: Այդ իսկ հանգամանքով պայմանավորված բանակցությունների նիստին արձանագրված բոլոր տեղեկությունները՝ այդ թվում և նախահաշվային գները և հաղթողին ընտրելու որոշումները հանդիսաում են հայտերի բացման նիստի արդյունքներով կատարված գրառումներ:

- Բանակցությունների վարման պարագայում բոլոր գնային համեմատությունները (մասնակիցների առաջարկած գների միջև, ինչպես նաև դրանց համեմատումը նախահաշվային գների հետ), իրականացվում են հենց այդ նիստին, ուսպի և նախահաշվային գները այդ նիստին հրապարակելը ուղղակիորեն կատարում է Օրենսդրության պահանջը և չի սահմանափակում որևիցէ մի մասնակցի շահերը:

3. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասով.

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն

<<1. Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:>>

Գնման ընթացակարգի շրջանակներում որոշ չափաբաժիններ արդեն իսկ հայտարարվել են չկայացած Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի և 3-րդ կետերի պահանջների համաձայն: Այդ մասին գնումների տեղեկագրում հրապարակվել է հայտարարություն սահմանված կարգով: Մնացած չափաբաժիններով ընթացակարգը չկայացած հայտարարելու համար նշված հոդվածով նախատեսված որևէ պայման առկա չէ, ուսպի ընթացակարգը չկայացված հայտարարելու մասով Մասնակցի պնդումը իրավաչափ չէ:»:

Պատվիրատուն 24.02.2021թ.-ին ներկայացված թիվ 08-115 գրությամբ հավելել է հետևյալը.

«Ի պատասխան <<Մեգիէլ>> ՍՊԸ-ի կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ 08.02.2021թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/06 ծածկագրով բողոքի, հայտնում ենք հետևյալը.

ԳԲՔԱ-ԼՕ-2021/06 ծածկագրով բողոքի շրջանակում 19.02.2021թ. ժամը 14:30-ին կայացած նիստի շրջանակում անհրաժեշտություն է առաջացել ներկայացնել ՆՄԲԿ-

ԲՄԱՊՁԲ-21/32 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով ստեղծելու մասին հրամանը, որը ներկայացնում ենք /կցվում է/:

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 20.01.2021թ. ժամը 14:00 -ին հրավիրվել է բանակցությունների նիստ, որին իրենց ներկայացուցիչների ներկայությունն են ապահավել <<Մի վնասիր>> ՍՊԸ, <<Մեգիէլ>> ՍՊԸ, Ա/Ձ Գոհար Հովհաննիսյանը և Ա/Ձ Արուսյակ Արզումանյանը /համապատասխան լիազորագրերով՝ ներկայացուցչին օժտած լիազորությունով, /կցվում են//:

Մասնակցի 08.02.2021թ. բողոքով ներկայացված այն պնդումը, թե <<Պատվիրատուն մինչև իսկ բանակցությունների ընթացքում <<գաղտնի>> է պահում նախահաշվային գինը>>, չի համապատասխանում իրականությանը, համադրելով մասնակիցների մինչ բանակցությունը և դրանից հետո ներկայացված գները, ակնհայտ է դառնում այն հանգամանքը, որ Պատվիրատուն բանակցության նիստին հնչեցրել է նախահաշվային գներ, մասնավորապես 11-րդ չափաբաժնով <<Մի վնասիր>> ՍՊԸ կողմից կատարված նվազեցումը.

Բանակցությունի
g հետո

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Քանակը	Նախահաշվային գին	<<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊԸ	<<Կուրացիո>> ՍՊԸ	<<Լևոն և Լամարա>> Դեղատուն>> ՍՊԸ	<<Նաիրի-Ալանիկա>> ՍՊԸ /ԱԱՀ-ով/	<<Մի վնասիր>> ՍՊԸ /ԱԱՀ-ով/	<<Մի վնասիր>> ՍՊԸ
11	Աբսորբենտ հիմնային	25	340 000				342 000	375 000	340 000

Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում <<Մեգիէլ>> ՍՊԸ 02.02.2021թ. էլ. փոստի միջոցով ճշտել է վերոնշյալ ծածկագրով 5-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարման հետ կապված հարցեր /կցվում է/, ուստի նման պարագայում առնվազն անհասկանալի է ընկերության կողմից հետագայում ձեռնարկած քայլերը:

Հարկ ենք համարում նշել, որ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում առկա են կնքված պայմանագրեր:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/06 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 22.12.2020թ.-ին հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Մրցույթը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսված չլինելու հիմքով:

iii. Մրցույթի հրավերի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերումը, որոնք խմբավորված են «113» չափաբաժիններում:

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Մեգիէլ» ՍՊԸ-ն:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.01.2021թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որոշել է ծանուցել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին՝ առաջարկված գնի նվազեցման շուրջ բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

vi. Հանձնաժողովի 20.01.2021թ.-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները, որոշել է, նախահաշվային գները գերազանցելու հիմքով, մերժել՝ 12-րդ չափաբաժնով «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, 51-րդ չափաբաժնով «Կուրացիո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, 86-րդ չափաբաժնով «Լևոն և Լամարա» Դեղատուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, 11-րդ, 93-րդ, 95-րդ չափաբաժիններով «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, 29-րդ, 45-րդ չափաբաժիններով «Մարգ-ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, 87-րդ, 89-րդ, 94-րդ չափաբաժիններով «Մի վնասիր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, 98-րդ չափաբաժնով «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, 45-րդ չափաբաժնով

«Ֆարմեգուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, 1, 2, 4, 9, 10, 28, 29, 53, 59, 60, 61, 64, 65, 67, 70, 89, 90, 100, 103, 108 և 109-րդ չափաբաժիններով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 4, 9, 10, 12, 13, 15, 16, 17, 18, 20, 25, 26, 28, 29, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 42, 43, 44, 45, 46, 53, 55, 56, 58, 59, 60, 61, 63, 64, 65, 67, 70, 74, 75, 77, 79, 81, 83, 84, 85, 86, 88, 89, 91, 96, 97, 98, 99, 100, 101, 103, 106, 107, 108, 109, 111 և 112-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի համաձայն:

viii. Հայտերի բացման նիստում չի հրապարակվել և արձանագրվել գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների նախահաշվային գինը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 08.02.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին

մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում,

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը),

3) պայմանագրի կնքում,

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

ՀՀ կառավարության 2017 թվականի 13 ապրիլի N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման» կարգի 2-րդ կետի.

1-ին ենթակետի համաձայն՝ 1-ին և 2-րդ սյունակներում լրացվում են գնումների միասնական անվանացանկով սահմանված (այսուհետ՝ անվանացանկ) միջանցիկ ծածկագիրը և անվանումը՝ անվանացանկի 4-րդ մակարդակին համապատասխան,

2-րդ ենթակետի համաձայն՝ 3-րդ սյունակում լրացվում է գնման ձևը: Ընդ որում, գնման ձևը լրացնելիս հաշվի է առնվում, որ գնման գինն անվանացանկի 2-րդ մակարդակում նշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների խմբերի հանրագումարն է,

3-րդ ենթակետի համաձայն՝ 4-րդ սյունակում լրացվում է ... «դրամ» բառը, եթե սույն ենթակետի «ա»-«ժթ» ենթակետերում նշված չափման միավորներից որևէ մեկը կիրառելի չէ,

4-րդ ենթակետի համաձայն՝ 5-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների մեկ միավորի գինը,

5-րդ ենթակետի համաձայն՝ 6-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության քանակը: Ընդ որում, եթե տվյալ տողի «Չափման միավորը» սյունակում նշված է «դրամ», ապա այդ տողի «Քանակը» սյունակում նշվում է «1» թիվը,

6-րդ ենթակետի համաձայն՝ 7-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր գումարը՝ հազ. դրամով: Ընդ որում, եթե տվյալ տողի «Չափման միավորը» սյունակում նշված է «դրամ», ապա այդ տողի «Միավորի գինը» սյունակում նշված գումարը հավասար է 7-րդ սյունակում նշված գումարը բաժանած հազարի: Հակառակ դեպքում 7-րդ սյունակում նշվում է «Միավորի գինը» և «Քանակը» սյունակների արտադրյալը բաժանած հազարի:

Նույն կարգի 3-րդ և 9-րդ կետերի համաձայն՝ գնումների պլանում փոփոխությունները կատարվում են սույն կարգի 2-րդ կետով սահմանված պայմաններով լրացումներ կատարվելու ձևով: Գնումների պլանը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, գնումների պլանում կատարված փոփոխությունները և լրացումները տեղեկագրում հրապարակվում են գնումների պլանի ամբողջական տեսքով:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ գնման գործընթացը, Օրենքի իմաստով, գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Իսկ արդեն Կարգով ՀՀ կառավարությունը սահմանել է, որ՝ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է և գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, անփոփելով, նշել, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Այսինքն՝ գնման գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է որպեսզի գնման առարկան ներառված լինի գնումների պլանում, համապատասխան ստորաբաժանման կողմից հաստատվի և գնումների համակարգողին ներկայացվի գնման հայտ, ձևավորվի

հանձնաժողով, որը հաստատում է հրավերը և հրապարակում պաշտոնական տեղեկագրում, որի դեպքում է գնման գործընթացը համարվում սկսված:

Հակառակ դեպքում ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ **օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին** նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված ցանկացած որոշմամբ կխախտվեն գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

Վերոնշյալ դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառվի գնումների պլանում՝ առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ բացառելով նաև

միավոր գումարի նշումը: Այս կարգով է միայն հնարավոր փաստել և հաստատված համարել գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի՝ գնումների պլանի առկա լինելու հանգամանքը:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են

միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակվում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 22.12.2020թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով բաց մրցույթը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսված չլինելու հիմքով: Մրցույթի հրավերի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման

առարկան է բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերումը, որոնք խմբավորված են «113» չափաբաժիններում:

Հանձնաժողովը, հայտերի բացման նիստում չհրապարակելով և չարձանագրելով գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գինը, որոշել է ծանուցել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին՝ առաջարկված գնի նվազեցման շուրջ բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին և բանակցությունների վարման նիստով, հիմք ընդունելով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները, որոշել է, նախահաշվային գները գերազանցելու հիմքով, մերժել՝ 12-րդ չափաբաժնով «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, 51-րդ չափաբաժնով «Կուրացիո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, 86-րդ չափաբաժնով «Լևոն և Լամարա» Դեղատուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, 11-րդ, 93-րդ, 95-րդ չափաբաժիններով «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, 29-րդ, 45-րդ չափաբաժիններով «Մարգ-ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, 87, 89, 94-րդ չափաբաժիններով «Մի վնասիր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, 98-րդ չափաբաժնով «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, 45-րդ չափաբաժնով «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, 1, 2, 4, 9, 10, 28, 29, 53, 59, 60, 61, 64, 65, 67, 70, 89, 90, 100, 103, 108 և 109-րդ չափաբաժիններով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը: Նշվածով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է 4, 9, 10, 12, 13, 15, 16, 17, 18, 20, 25, 26, 28, 29, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 42, 43, 44, 45, 46, 53, 55, 56, 58, 59, 60, 61, 63, 64, 65, 67, 70, 74, 75, 77, 79, 81, 83, 84, 85, 86, 88, 89, 91, 96, 97, 98, 99, 100, 101, 103, 106, 107, 108, 109, 111 և 112-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի համաձայն:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված և համադրված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ, տվյալ դեպքում, «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (նիստը նախագահողը), հայտերի բացման նիստում չհրապարակելով և չարձանագրելով գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գինը, ապա հրավիրելով և վարելով բանակցություններ, խախտել է Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դրույթները, որի արդյունքում խախտվել է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջները, քանի որ բանակցություններին ներկա գտնված մասնակիցները օբյեկտիվորեն զրկվել են նախահաշվային գներն իմանալուց:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Պատվիրատուի կողմից սույն բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձին չներկայացվեց որևէ վերաբերելի կամ թույլատրելի ապացույց, առ այն, որ բանակցությունները սկսելուց առաջ ներկա մասնակիցներն իրազեկվել են նախահաշվային՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գների մասին:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դրույթները, որի արդյունքում խախտվել է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

Բողոքներ քննող անձն, անդրադառնալով Բողոքաբերի կողմից բողոքով ներկայացված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին մրցույթը չկայացած հայտարարելուն պարտավորեցնելու պահանջին, փաստում է հետևյալը.

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … *վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը*:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի՝ *«վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը»* ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջը (վեճի առարկան), կկանխորոշի բողոքի քննության

շրջանակն ու սահմանները: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակել բողոքի պահանջը (վեճի առարկան) փոփոխելու հնարավորությունը՝ գործի քննության ընթացքում, ուստի բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու / փոփոխելու / նվազեցնելու բողոքի պահանջը նաև գործի քննության ընթացքում:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Հանձնաժողովի կողմից Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դրույթների թույլ տված խախտման հանգամանքը չի կարող հանգեցնել բողոքով ներկայացված՝ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին մրցույթը չկայացած հայտարարելուն պարտավորեցնելու պահանջի բավարարմանը, քանի որ Հանձնաժողովի կողմից թույլ տված խախտումը դրսևորվում է մի դրվագով, իսկ ընթացակարգը չկայացած հայտարարելու համար անհրաժեշտ է գնման ընթացակարգի ամբողջական խախտումներով իրականացնելու հանգամանքի առկայություն (օրինակ՝ գնման ընթացակարգի առանց իրավական հիմքի կազմակերպված լինելը, հանձնաժողովի նիստի իրավազոր չլինելը և այլն), որը սույն բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձը չարձանագրեց, ուստի Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դրույթների թույլ տված խախտման հանգամանքը բավարար չէ ընթացակարգը չկայացած հայտարարելուն պարտավորեցնելու համար:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ բողոքով ներկայացված և առկա փաստական հանգամանքները հաստատված ու ապացուցված համարելու հանգամանքը չի կարող հանգեցնել բողոքով ներկայացված պահանջի բավարարմանը, իսկ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը (նիստը նախագահողը), հայտերի բացման նիստում չհրապարակելով և չարձանագրելով գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գինը, ապա հրավիրելով և վարելով բանակցություններ, գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դրույթների պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 08.02.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/06 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**